ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2023 թվական N 162 - Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի N 283-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Արցախի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 21-ի «Արցախի Հանրապետությունում արտադրված կաթի դիմաց լրավճարի տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 283-Ա որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) «50 (հիսուն)» բառերը փոխարինել «70 (յոթանասուն)» բառերով.

2) «35 (երեսունհինգ)» բառերը փոխարինել «50 (հիսուն)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***